

ԹԵՂԵԱԿՑՈՒԹԻՒՆ

Առ 3. Կարապետ Տ. Սահակեան

Անցեալ տարուան Ռազմավէպի (օգոստոս) յօդուածներէ՝ զոր ինծի ուղղելու պատիւն ըրած էիք՝ ուշ հասաւ ձեռքս, յայտնի պատճառներով:

Դամակի մը տարողութեան չափով կ'ուզեմ իմ դիտողութիւններս ընել Ա. Մակ. Ժի գլխուն 20 համարի Սպարտացիները Պարսիկներ կարգալու առաջարկի մասին:

Առանց մտնելու խնդրին պատմական պարագաներուն՝ դիտել կու տամ նախ՝ որ Գրքին մի ե նոյն գլխուն մէջ 5 — 6 քանգամներով յիշատակուած սպարտացիներէն մէկը միայն չէ Սպարտոս? ի փոխելով բարձրացուած լոյսը չկրնար ձեռք բերուիլ. հարկ պիտի ըլլայ կարգաւ սրբագրել «Πρὸς Σπαρτιάτας, Σπαρτιάταις, Σπαρτιάταις, Σπαρτιάτων, τῶν Σπαρτιάτων» (համար 2, 5, 6, 20, 21), ինչ որ դիւրին չէ կարծեմ:

Թէ Հրեաները Սպարտացիներու հետ խնամութիւն մը ունենալ կը կարծէին՝ ո՛չ միայն Մակ. Ա գիրքէն կը տեսնուի, այլ եւ Բ գիրքէն ալ՝ ուր Յասոնի հաժար գրուած է (բայտ յոյն բնագրին) Թէ Լալկե. դիմոնացոց մօտ ապաստանեցաւ՝ իբրեւ իրեն ազգականներուն (Ե. 9—10):

Կարևոր է մտադիր ըլլալ նաև որ ըստ Թովսեպոսի (Հնախ. ԺԴ. Ժ. 22) Պերգամացիներն ալ իրենց հրովարտականներուն մէջ կը յիշատակեն Թէ Հրեաներուն հետ հաստատած էին բարեկամութիւն մը՝ որ մինչև Ալլաւամ կը վերանար:

Առասպելական ազգակցութեան այս յաւակնութիւնները ապահովաբար չունին պատմական արժէք մը, եւ պէտք է հին ազգարանութեանց կամայական մերձեցումներով մեկնել այդ երևոյթը, կամ հրէական Սփիւռքի (diaspora) ենթադրական հետեւութիւններ տեսնել անոր մէջ՝ ինչպէս կը կարծէ Bousset գերմանացին:

Հին կտակարանի մէջ Պարսիկները հայերէն թարգմանութեամբ կ'երեւին միայն (Ա. Մակ. Ա. 1. 2, 56. Բ. 1. ԺԴ,

1, 2) մինչդեռ բնագրին ունի Μηδοί (Մարք). անգամ մըն ալ Գանիէի (Ա. 3) մէջ յիշուած է ի Պարսկաց մը՝ զոր պէտք է կարգալ ի փարսամաց, ինչպէս ցոյց կու տայ երբայեցիներէն բառը եւ յոյնին փորձաբեւ օտարութի ձևը:


Գաւով Թորենացիի այն կարծիքին՝ որով Պարսիկները (կամ Արշակունիները) Արքահամէն սերած են՝ չկրնար հաստատուիլ Մ. Գիրքով. այլ՝ ինչպէս սովոր է մեր պատմահայրը՝ վերջամուտ տեսու. Թիւններէ կամ հիներու ազգարանական հետազոտարիներէն օգտուելով՝ կրնով մը սեմական նկատուած այդ պարթե ժողովուրդն ալ Արքահամու աղախինէն կ'իջեցնէ միամիտ համարձակութեամբ:

Այսչափ առ այժմ:

Ողջունելի սիրոյ

Եղիշէ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

Զմիռնիս 24 յուլ. 1909



Ա Ռ Ժ Ա Մ Ա Յ Ն

Մ Տ Ա Ջ Գ Ե Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Գ

.... 1841—1842 զօգոստ.

Ի վերանալ Մարիամու յերկինս՝ գիտաց Սերորէն զի չէ այլևս ինքն առաջին յեղական բնութիւնս:

*

Մանուշակ խոնարհութեան օրինակ. ե որպէս առաքինութիւնն այն առաջին պատուականութեամբ, յետին անուամբ աչապէս ծաղկն պատկառանք յաննալ, յառաջագէմ երեւալ ի փառնային:

*

Հնազանդութիւն ձեռք են Աստուծոյ. մի՛ որ երկիցէ եւ ի զրդուելն ինչ, զի ի ձեռանէ ի ձեռն փախէ զնա Աստուած:

*

Քուն արգալոյ հրեշտակ է հանգուցիչ, մեղաւորին՝ սատան ընդոստուցիչ:

Ամենայն բողէ մանրացոյց է յաւիտե-
նականութեան :

*

Ի ժամանակի մարդս որպէս ընդ պա-
տուհան կարկառեալ կայ, ընդ հուպ ի
ներքս ի յաւիտենականութիւն առնու ըզ-
զլուին, և ամենայն ինչ անյայտ լինի
արտաքոյ :

*

Ապաքէն երջանիկ է կատարեալ խըն-
դամբուն :

*

Եւս նիւթեաց մեզ խանձարուրտ, Ա-
ղամ անկաւ պատանս տխուրս :

*

Առաջին քայլափոխ յորորոց, երկրորդ
դամբանին ի ծոց :

*

Ի կեանս իւրում նման է մարդ բազ-
մամբոյ քաղաքի ուր անդադար է ելու-
մուտ. իսկ ի մահուն անապատանայ :

*

Որպէս տարադէմ ուղեոր փակեալ ըզ-
պատուհանս տանն և զգրունս՝ գնայ ի
բաց, այսպէս թողու հոգի զմարմին :

*

Ձիք ի մարդում փափկագոյն որպէս
զսիրտ, զգուշացին ձեռք ի հպել, Աս-
տուծոյ միայն է գիտուն վարել զսիրտ :

*

Ընդ բերանն ի վեր մինչև ի միտս և
ընդ բերանն ի վայր մինչև ի սիրտ ձգի
թիւ իմաստից. որ ի վերուստ իջեալ ընդ
բերանն ելանէ՝ նուրբ է այն և թեթեւ, որ
ի սրտէն ընդ բերանն՝ խորին և ծանր,
իսկ որ երկոցուն հաղորդ էլցէ ընդ բե-
րան՝ չիք իրրեւ զնա :

*

Որչափ քայլս փոխէ կեանք զնոյն ի յե-
տուստ կոխէ մահ :

*

Եւ Մեղայ մի՝ բանայ զարքայութիւն :

*

Ճանապարհ քրիստոնէի ձգի ի մարէն
մինչ ի խաչն :

*

Քարեկամութիւն, հաղորդութիւն խըն-
դութեան և արտասուաց այլում :

*

Հերեսիովտ նետածիգ լինի յեկեղեցի,
և նետքն յաղթանակը կանգնին ի նմա :

*

Յաւերակս և ի դրամս նստի ժանգ ժա-
մանակի :

*

Մտանէ ի զրոյցս ցուրտ որպէս զեր-
կաթ և ելանէ ասորաշէկ որպէս ի հնոցէ :

*

Գովեստ առաւել քան զարժան՝ երզի-
ծանք են :

*

Ամենայն ինչ ժամանակաւ կարօտի,
այլ զժամանակ կենդանի առնեն զործք :

*

Ձորակ մի տստի և ձոր մեծ անտի, և
ի միջի վիճակ անձկալայր, և հասկը զա-
լար և հասկը ատոր. և ոմն մի անդլա-
կի յառաջեւով հնձէ զհասուն և զտհաս,
և ոմն այլ ի յետուստ ի քոթանակ իւր
ամայ զհունձան. երկոցին ևս սևաքողք,
երկոցին հարազատք, լուռք անդադարե-
լիս : Անուն եղբօրն մահ և քեռն գերեզ-
ման և ձորքն յաւիտեանքն են և հովիտն
անձուկ աշխարհս է :

*

Որչափ զսէր որ ճանաչէ, նոյնչափ և
զԱստուած :

*

Օձի հանգէտ զալարուն
Քան զօձ խայթող է լեզուն :

*

Ձկապուտակայն օթոց տունջեան և
զաստղանկար սամոյր գիշերոյն՝ արու-
սեակ որպէս ճարմանդ ոսկեղէն շաղկապէ
կարմրածայր ժապաւինօք ընդ առաւօտս
և երեկս :

*

Ի տխրորակ շիթս անձրեւու ծնանի
ծիածան :

Հ. Ղ. ԱՆՈՒՍ

Շարայտիկի